ՇՆՈՐՀԱՎՈ՞Ր ՆՈՐ ՏԱՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ՇՆՈՒՆԴ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԲԱՐՕՐՈՒԹՅՈՒՆ ՁԵԶ

ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՍԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 1 - 2 (16197) ՇԱԲԱԹ, 4 ՀՈՒՆՎԱՐԻ 2014 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ԱՄԱՆՈՐՅԱ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ ՎՐԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Դեկտեմբերի 31-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին եւ վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին Նոր տարվա առթիվ շնորհավորական ուղերձ հղեցին Վրաստանի բնակչությանը:

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին իր Ամանորյա ուղերձում, մասնավորապես, նշեց. «Առաջին հերթին ցանկանում եմ շնորհավորել այն մարդկանց, ովքեր կարիքի մեջ են, հաջորդ տարին նրանց համար կլինի օգնության տարի. ցանկանում եմ շնորհավորել այն մարդկանց, ովքեր այսօր Վրաստանում չեն գտնվում: Հաջորդ տարին նրանց համար կվերածվի հայրենիք վերադառնալու տարի:

Անցյալ տարին նշանակալից էր վրաց ժողովրդավարության համար: Անցյալ տարի ազատ, ժողովրդավարական գործընթացի արդյունքում կարողացանք համախմբվել, ավարտել ետխորհրդային դարաշրջանը եւ սկսել արդի եվրոպական պետության շինարարությունը: Սակայն ժամանակակից եվրոպական Վրաստանի շինարարությունը պետք է հիմնված լինի վրացական արժեքների եւ վրաց ավանդույթների վրա:

Ես բոլորին մաղթում եմ առողջություն, երկարակեցություն եւ բարօրություն: Կոչ եմ անում միասին ներգրավվենք նոր երկրի շինարարության գործընթացում»:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու շնորհավորական ուղերձում, մասնավորապես, ասված է. «Անցյալ տարին, իրոք, նշանակալից էր մեր երկրի համար, տարին հագեցված էր իրադարձություններով եւ զգացմունքներով: Մենք անցկացրինք իրականում ժողովրդավարական եւ ազատ նախագահական ընտրություններ եւ դրանով իսկ քայլ կատարեցինք ժողովրդավարության ուղիով:

Անցյալ տարի երկրում սկսվեց արդարության հաստատման գործընթացը: Ավարտվեց վախի եւ ահաբեկչության ժամանակաշրջանը: Հազարավոր մարդիկ, ովքեր նախորդ իշխանության օրոք անարդարացի եւ ան-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ. «ՍՐՏԱՆՑ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՄ ՁԵԶ...»

Դեկտեմբերի 31-ին, կեսգիշերին, հեռուստատեսության եթերում ելույթ ունեցավ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, որտեղ, մասնավորապես, ընդգծված է. «Անցնող տարին հագեցած էր բազում նախաձեռնություններով ու իրադարձություններով, բայց ամենակարեւորը, կարծում եմ, Հայաստանի տնտեսական վերելքին եւ անվտանգության մակարդակի բարձրացմանը միտված՝ խորը գիտակցված աշխատանքն էր: Մենք ավելի սերտացրինք Հայաստանի տնտեսական, քաղաքական ու ռազմական համագործակցությունը Ռուսաստանի Դաշնության հետ, իսկ գալիք տարի, վստահ եմ, կդառնանք Մաքսային միության լիիրավ անդամ: Հայաստանը ստեղծում է նոր իրականություն, որտեղ լինելու է ավելի պաշտպանված եւ ավելի մրցունակ:

Մենք շարունակեցինք եւ հետեւողականորեն շարունակելու ենք բարեփոխումների մեր ճանապարհը: Այստեղ մեր համագործակցությունը Եվրոպայի եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ ոչ միայն չի թուլանալու, այլեւ խորանալու է:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆ» ԹԵՐԹԻՆ ԵՎ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Թանկագի՛ն բարեկամներ.



Ի սրտե շնորհավորում եմ «Վրաստան» թերթի աշխատակիցների ու ընթերցողների Նոր տարին եւ Սուրբ Ծնունդը: Իր 94-րդ տարին թեւակոխող «Վրաստանը» նշանակալի դեր է կատարել վրաց եւ հայ ժողովուրդների, իսկ վերջին երկու տասնյակ տարիների ընթացքում արդեն անկախ Վրաստանի ու Հայաստանի միջեւ բարեկամական, եղբայրական եւ բարիդրացիական հարաբերությունների ձեւավորման ու խորացման գործում:

Հաջողություններ ձեզ վրաց եւ հայ ժողովուրդների բազմադարյա բարեկամության ամրապնդմանն ու զարգացմանն ուղղված ձեր լրագրողական գործունեությանը: Ձեր ընտանիքներին ու թերթի ընթերցողներին մաղթում եմ առողջություն եւ երջանկություն, իսկ մեր Վրաստանին, նրա բազմազգ ժողովրդին, որի անկապտելի մասն եք դուք, ամբողջացում, առաջընթաց եւ բարգավաճում:

Շնորհավոր Նոր տարի, բարեկամներ:

Իրակլի Ղարիբաշվիլի
Վրաստանի վարչապետ

«Վրաստան» թերթի կոլեկտիվին

Թանկագի՛ն բարեկամներ, «Վրաստան» թերթի աշխատակիցներ եւ ընթերցողներ:

Շնորհավորում եմ Նոր տարվա եւ Սուրբ Ծննդի առթիվ: 2014 թվականը, ինչպես մեր բազմազգ Վրաստանի, այնպես էլ ձեր յուրաքանչյուրի ընտանիքի համար լինի բարօրության, առաջընթացի տարի: Մաղթում եմ խաղաղություն, առողջություն եւ հաջողություններ:

Դավիթ Ուսուփաշվիլի
Վրաստանի խորհրդարանի նախագահ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻ ՈՒՂԵՐՁԸ

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆԻՆ ԵՎ ՎԻՐԱՀԱՅ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻՆ

Ուղերձում, մասնավորապես, ասված է.

Ամանորի եւ մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան ու Աստվածահայտնության տոների առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքները Ձեզ, եկեղեցականաց դասին, թեմական ու համայնքային վարչությանց պատվարժան անդամներին եւ տիրախնամ թեմիդ հավատավոր Մեր զավակներին:

2014 թվականին լրանում է 100-ամյակը աշխարհավեր եւ միլիոնավոր մարդկանց կյանքեր խլած Առաջին Աշխարհամարտի, հընթացս որի Օսման-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՄԱՂԹՈՒՄ ԵՄ, ՈՐ ԴՈՒՔ ՄԻԱՅՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԱՎԵՏԻՍՆԵՐ ՀՂԵՔ

Հարգարժա՛ն պարոն Վան Բայբուրթյան.

Սիրով ու ջերմությամբ շնորհավորում եմ Ձեզ եւ Ձեր խմբագրակազմին Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առթիվ եւ մաղթում, որ 2014 թվականը Ձեզ համար լինի խաղաղության, ընտանեկան երջանկության եւ ստեղծագործական նորանոր նվաճումների տարի:

Ձեր կարեւոր աշխատանքով Դուք բարձր եք պահում հայ լրագրողի անունն ու պատիվը եւ նվիրումով նպաստում եք հայ ինքնության դրսեւորմանն ու պահպանմանը:

Մաղթում եմ, որ 2014 թվականը մեր ժողովրդի համար դառնա այնպիսի տարի, որ Դուք աշխարհին եւ հայությանը միայն խաղաղության եւ բարեկեցության ավետիսներ հղեք:

Ձեզ եւ Ձեր աշխատակիցներին մաղթում եմ ստեղծագործական, հայրենասիրական նոր ազդակներ, նոր մտահղացումներ, եւ դրանք իրականացնելու հնարավորություններ, որպեսզի Ձեր լրատվամիջոցը կարողանա ակտիվորեն նպաստել Հայաստան-Սփյուռք-Արցախ կապերի ամրապնդմանն ու ազգի միասնականացմանը:

Թող Տիրոջ Աջը հովանի լինի Ձեզ, զորակցի Ձեր ազգանվեր ձեռնարկումներին եւ Սուրբ Ծննդյան Լույսը առաջնորդի մեր աշխարհասփյուռ ժողովրդին՝ միասնության ու ազգակերտման իր ճանապարհին:

Հարգանքով ու գնահատանքով՝ Հրանուշ Հակոբյան-ՅԱՆակոբյան

ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՁԵՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ, ՎՐԱՍՏԱՆԻՆ ՈՒ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ

Սիրելի՛ բարեկամներ.

Ջերմորեն շնորհավորում եմ Վրաստան թերթի խմբագրակազմի եւ ընթերցողների գալիք Ամանորն ու Սուրբ Ծնունդը:

Արդեն 93 տարի է «Վրաստան» թերթը հավատարիմ է վիրահայերի կյանքի, առօրյայի, ակնկալիքների եւ իղձերի ճշմարիտ տարեգիրը լինելու բարձր կոչմանը: Համոզված եմ, որ 2014 թվականին եւս թերթը շարունա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՄԱՆՈՐՅԱ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ ՎՐԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տանելի պայմաններում գտնվում էին բանտարկության մեջ, այս տարի իրենց հարազատ տանը կդիմավորեն Նոր տարին: Գիտեմ, դեռ կան մարդիկ, ովքեր դեռ սպասում են արդարության վերականգնանը: Վստահեցնում եմ, որ այդ գործընթացն օրենքի պաշտպանությամբ կանցկացվի եւ դրա արդարության մեջ ոչ ոք չի կասկածի»:

Անդրադառնալով տնտեսական հարցերին, վարչապետը նշեց. «Էկոնոմիկայի զարգացումը մեր գլխավոր մարտահրավերն է, մենք բոլոր պայմաններն ստեղծել ենք գործարարության զարգացման եւ մատչելիության, աշխատատեղերի ստեղծման համար: Հաջորդ տարվանից կստեղծվեն պայմաններ, որ 4-5 տարվա ընթացքում ոչ մի թիզ հող անմշակ չմնա: Մենք թողարկելու ենք այնպիսի բարձրորակ արտադրանք, որպեսզի ներկրումը փոխարինվի արտահանմամբ: Իրատեսորեն պետք է օգտագործենք բնական բոլոր ռեսուրսները, որով հարուստ է մեր երկիրը»:

Ելույթի վերջում Իրակլի Ղարիբաշվիլին ասաց. «Իմ բարի մաղթանքներն եմ հղում Նոր տարվա առթիվ Վրաստանի բոլոր քաղաքացիներին, ուսուցիչներին, բժիշկներին, զինծառայողներին եւ ոստիկաններին, բոլոր նրանց, ովքեր անձնվիրաբար ծառայում են մեր հայրենիքին»:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆ» ԹԵՐԹԻՆ ԵՎ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

ՀԵՆՁԵԼ ՄԿՈՅԱՆ. «ԵՍ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՄ ԼԻՆԵԼ ԻՄ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՔԻՆ»

Սկիզբ ու ավարտ: Ավարտ ու սկիզբ: Բնության ու կյանքի ի սկզբանե՝ Արարչական դրվածքը, որ մի չգրված օրենքով «իրականացնում» են տարիները՝ միլիոնավոր, միլիարդավոր, անհաշիվ-անհամար տարիները... Անցնում է մեկը, գալիս մյուսը, մեռնում է մեկը, ծնվում է մյուսը... Բայց պատմությունը մնում է, կյանքը մնում է... Մնում է ու շարունակում նրան, մնում է ու նորանոր այլ ծնունդների կենսատու ավիշ դառնում եւ գոյության ու արարումի մի նոր սկիզբ...

Հիմա, երբ մի քանի ժամից մի տարի էլ ահա կդառնա պատմություն, ու նրան շարունակելու կգա մի ուրիշը, մի նո՛ր նորը, ինձ ակամա այս խոհերը համակեցին... Սկզբի, անցյալի. հետեւաբար արածի-թողածի, պատմությանը պահ տվածի ու շարունակության, գալիքի, հետեւաբար անելիքի-թողնելիքի, պատմությանը պահ տալիքի ու կյանքը շարունակելու մասին:

Ու սա էլ է երեւի բնական, որ եթե անհատից է սկսվում ամեն ինչ, որ եթե անհատն է ինչ-որ առումով կյանք ու գործ կերտում, ապա նույն անհատն էլ նախ ինքն իրեն, մեկուսի է հանրագումարում իր արածչարածը, ապա եւ այդ մասին կիսվում այլոց հետ... Ու առավել եւս, երբ այդ անհատի կյանքը սերտորեն է կապված այդ այլոց՝ ուրիշների հետ: Եվ ոչ թե սոսկ կապված, այլ սերտորեն միահյուսված, նրանցով ապրող, նրանցով շնչող...

Տասնհինգ տարի է մեր երկրի՝ Վրաստանի բարձրագույն օրենսդրական մարմնի՝ խորհրդարանի պատգամավոր եմ ու ամանորյա այս օրերին չեմ կարող պարզապես չմտորել, չկիսվել արած-չարածի ու անելիքների մասին...

Ինչո՞վ պարծենանք մենք՝ նինոծմինդացիներս, անցած տարում...

Լուծվեցի՞ն արդյոք շրջանի առջեւ ծառացած բոլոր հիմնախնդիրները կամ ինչ չափով... Ում միջոցով, ինչպես, իմ հարազատ Նինոծմինդայի շրջանն է ինձ ահա այսքան տարի վստահում, ու ես պարտավոր եմ կանգնել նրանց կողքին, անել հնարավորը, երբեմն նաեւ անհնարինը...

Բոլոր դեպքերում ասեմ, որ 2013 թվականին հարցերն ստացան կյանք ու դրանց մեջ հատկապես խմելու ջրի, լույսի, փողոցների բարեկարգման՝ ասֆալտապատման ու մանավանդ դրանք լույսով ապահովելու, շինարարական... Բարեկարգվեցին-հիմնանորոգվեցին շրջանի մի շարք ջրագծեր՝ Օռլովկա-Սպասովկա, 10 կիլոմետր ձգվող Ուչմանա-Թորիա-Հեշտիա, Փոկա, Գոնդուրա, Գորելովկա, մշակույթի տները՝ Ջիգրաշենում, Օրոջալարում... Ու դեռ մնաց գործ 2014-ին անելու:

Մեծ էր առաջընթացը շինարարության մեջ. տարաբնույթ օբյեկտներ վերանորոգվեցին, կենցաղի տներ Գանձայում, Սաղամոյում, Ռադիոնովկայում... միևի-մարզադաշտ կառուցվեց Դիլիֆում:՝

Գնահատանքով եմ ուզում խոսել շրջանի բազմաթիվ խնդիրներով միշտ մտահոգ մեր ղեկավարության՝ շրջանային վարչության նախագահ Գագիկ Ղարսլյանի ու մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ Սմբատ Կյուրեղյանի մասին, որոնց հետ սերտ համագործակցում եմ ու հնարավորին սահմաններում աջակցում նրանց՝ բարոյապես, նյութապես ինչպես առաջնահերթությունների, այնպես էլ անհրաժեշտությունների լուծման հարցում...

Ուրախացրեց բոլորիս հատկապես այն նաեւ, որ Տամբովկա գյուղի համար հատուկ տրակտոր ձեռք բերվեց՝ ձմռանը ճանապարհները մաքրելու եւ շրջանի հետ երթեւեկությունը մատչելի դարձնելու համար:

Ու մենակ էլ չմնացինք՝ մեզ սատարեցին տարբեր հիմնադրամներ, մասնավորապես՝ տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների «Գյուղի զարգացման ծրագիր» հիմնադրամը, կենտրոնական իշխանությունները: Շուրջ 3,5 միլիոն լարիի աջակցություն ենք ստացել այս ամենի համար:

Բայց կիսվելով հանդերձ այս ամենի մասին, չեմ կարող չնշել, որ դեռ շատ անելիքներ ունենք, դեռ կան չլուծված մի շարք խնդիրներ, որոնք պիտի անենք, որ 2014-ին լուծում ստանան: Ես, անձամբ, միշտ կկանգնեմ նրանց կողքին, ովքեր վստահել են ինձ, ովքեր հաճախ են դիմում ինձ աջակցության խնդրով: Իսկ դա իմ ամբողջ շրջանն է, ամբողջ Նինոծմինդան, որի բարօրության համար չեմ խնայի ոչինչ, որի բոլոր փողոցները, համոզված եմ, 2014-ին գիշերային բոլոր ժամերին արդեն կլինեն լուսավորված...

«Վրաստան» թերթի միջոցով, ցանկանում եմ ասել՝ շնորհավոր նորտարյա տոնդ, սիրելի Նինոծմինդա, շնորհավոր տոնդ, սիրելի Վրաստան:

Հենզել Մկոյան
Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Նինոծմինդայի շրջանից

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻ ՈՒՂԵՐՁԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

յան Թուրքիան իրագործեց Հայոց Ցեղասպանությունը: Մեր սրբազան պարտքն է Ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ, միավորել հավատավոր մեր զավակներին միասնաբար ջանքեր բերելու հանուն մեր ժողովրդի արդար պահանջների իրագործման եւ իրավունքների պաշտպանության:

Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության խորհրդի առջեւ Միածնաէջ Մայր Տաճարից Մեր աղոթքն ենք բարձրացնում առ Աստված՝ հայցելով, որ ազգս հայոց, համախումբ Հայրենիքի եւ Մայր Եկեղեցու շուրջ հաղթահարի ազգային կյանքի դժվարությունները եւ շարունակի իր ջանքերը բերել Արցախի հիմնախնդրի կարգավորմանը եւ սատարել սփյուռքի հավատավոր մեր զավակներին, մասնավորապես պատերազմի մեջ ապրող սիրիաբնակ մեր քույրերին ու եղբայրներին, ի խնդիր հայ կյանքի շենացման եւ լուսավոր ու բարձր ապագայի կերտման:

Թող Ամենախնամ Տերը Սուրբ Ծննդյան շնորհներով զորավիգ լինի ձեզ եւ պարգեւի քաջառողջություն եւ նախանձախնդիր ծառայության բյուր հաջողություններ ի մխիթարություն աշխարհասփյուռ քրիստոսապաշտ մեր ժողովրդի, ի պայծառություն տիրախնամ Ձեր թեմի եւ առաքելաշավիղ մեր Սուրբ Եկեղեցու:

ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱՒ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱՒ
ՁԵԶ ԵՒ ՄԵԶ ՄԵԾ ԱՒԵՏԻՍ

ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՁԵՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ, ՎՐԱՍՏԱՆԻՆ ՈՒ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կելու է իր առաքելությունը հանուն հայեցի դաստիարակության, հայրենասիրության ու ազգերի բարեկամության ազնիվ գաղափարների: Համոզված եմ, որ ընթերցողներն ըստ արժանվույնս են գնահատում թերթի ունեցած ավանդն ու վաստակը հայ-վրացական բարիդրացիական հարաբերությունների ամրապնդման, հայապահպանության, հայկական համայնքի մշակութային կյանքի հարստացման գործում, եւ դա է լավագույն ամանորյա նվերը «Վրաստան» թերթի անձնակազմի համար:

Ամանորը միշտ ընտանեկան եւ շատերի համար ամենասիրելի տոներից մեկն է, քանի որ նրա մթնոլորտը համակված է հրաշքի, առավել լավ ապագայի, երջանկության ու բարեկեցության ակնկալիքով: 2014 թվականը թող բերի սեր, բերկրանք, վերելքներ: Նոր տարվա սկիզբը կարող է դառնալ նաեւ նոր կյանքի սկիզբ եւ իրական դարձնել մեր բոլոր, այդ թվում, ամենանվիրական երազանքները: Ուստի ես ցանկանում եմ, որ մեր բարի սպասումները, նվիրական ցանկություններն իսկապես իրականանան եւ մաղթում եմ ձեզ առողջություն, հաջողություն եւ խաղաղություն ձեր օջախներին, Վրաստան երկրին եւ Մայր Հայրենիքին:

Կրկին շնորհավորում եմ «Վրաստան» թերթի ստեղծագործական կոլեկտիվին, ընթերցողներին, թող հավատը, սերն ու երջանկությունը թեւածեն ձեր սրտերում, ընտանիքներում, օջախներում եւ համայնքում:

Խորին հարգանքով՝

Հովհաննես Մանուկյան
Վրաստանում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան

ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈԳԵՎՈՐՈՒՄ ԵՆ

Ավանդույթի համաձայն, հետադարձ հայացք նետելով անցնող տարում կատարված աշխատանքներին, ուրախ ենք մեր ձեռքբերումներով, մեր հաջողություններով, ինչ խոսք, խորհում ենք նաեւ այն ամենի շուրջ, ինչը չենք հասցրել իրագործել նախատեսված ժամանակամիջոցում:

Ձեռք բերած հաջողությունները ոգեւորում են Ախալքալաքիի շրջանի մտավորականությանը, ուր վերջին մի քանի տարում հիմնովին փոխվել է մարդկանց վերաբերմունքը ուսման ու կրթության բնագավառի հանդեպ, ավելացել հարգանքն ու վստահությունը մանկավարժի նկատմամբ:

Եվ ես էլ, լինելով ուսուցչական մեծ գերդաստանի ներկայացուցիչն ու կրթության բնագավառի երկարամյա ներկայացուցիչը, ուրախություն եմ ապրում այս ոլորտի ամեն մի հաջողության, ամեն մի ձեռքբերումի եւ խորապես ցավում նույնիսկ մասնակի բացթողումների համար:

Եվ այսօր ուզում եմ իմ երախտագիտությունը արտահայտել մեր շրջանի դպրոցի բոլոր աշխատողներին՝ իրենց հայրենավեր գործունեության, աճող հերթափոխի կրթության ու դաստիարակության գործին անմնացորդ նվիրաբերվելու համար:

Ցանկանում եմ Ամանորյա բարի մաղթանքներ հղել մեր շրջանի դպրոցական կոլեկտիվներին՝ ուսուցիչներին, ծնողներին, դպրոցականներին, բոլորին, «Վրաստան» թերթի կոլեկտիվին եւ բոլոր ընթերցողներին: Թող նոր տարին կրկին լինի արդյունավետ ձեռքբերումների, հաջողությունների տարի:

Բարին ձեզ հետ, սիրելի մանկավարժներ, գործընկերներ, մեր հայրենակիցներ:

Նարցիս Կարապետյան
Ախալքալաքիի կրթական ռեսուրս-կենտրոնի պետ

ՈՐ ԱՎԵԼԱՆԱՆ ԳԵՐԱԶԱՆՑԻԿՆԵՐԸ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

2013 թվականին Նինոծմինդայի շրջանում ունեինք յոթ ոսկե եւ յոթ արծաթե մեդալակիր շրջանավարտ, 9-րդ դասարանի ինը գերազանց աշակերտ, որոնք 7-9-րդ դասարաններում գերազանց ուսման համար որպես նվեր համակարգիչներ ստացան, շուրջ 40 նախապատրաստական կուրսի ուսանող, պաշտպանության ակադեմիայի ունկնդիր:

Ուրախալի է, որ կրթության եւ գիտության նախարարի սահմանած «Ամագդարի» պարգեւի առաջին դափնեկիրը դարձավ Փոկա գյուղի դպրոցի ուսուցչուհին: Անցյալ տարի վերապատրաստվեցին քիմիայի եւ ռուսաց լեզվի մանկավարժները, նորամուծություններ ներդրեցին երկրորդ լեզվի կամավոր մանկավարժները: Նրանց նախաձեռնությամբ անցկացվեց մրցույթ, որին գեղագրության, թարգմանության եւ ազատ թեմաներով մասնակցեց ոչ վրացական դպրոցների շուրջ 150 աշակերտ:

Ցանկանում եմ մեր բոլոր աշակերտներին, մանկավարժներին, հանրակրթական հատվածի ներկայացուցիչներին, բոլոր նինոծմինդացիներին, Վրաստանի բոլոր բնակիչներին շնորհավորել Նոր տարվա առթիվ եւ մաղթել հաջողություններ: Տա Աստված, որ 2014 թվականն առանձնակի հիշատակելի դառնա բոլորի համար:

Դավիթ Ջեղգինիձե
Նինոծմինդայի հանրակրթական ռեսուրս-կենտրոնի պետ

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԿԱՆԽԱԳԾՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «5 ՏՈԿՈՍԱՆՈՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ԻՐԱՏԵՍԱԿԱՆ Է»

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու կանխագծումներով, հաջորդ տարի Վրաստանի տնտեսական աճը կկազմի 5 տոկոս:

«Դա մեր կանխագծումն է, որը հաստատվում է նաեւ Համաշխարհային բանկի փորձագետների կողմից, իրատեսական թիվ է»,- հայտարարեց վարչապետը:

Խոսելով 2013 թվականի տնտեսական անկման մասին, Իրակլի Ղարիբաշվիլին նշեց, որ դա պայմանավորված էր երկրում առկա կոհաբիտացիայի կարգով: «Կոհաբիտացիայի պայմաններում, բնականաբար, ներդրողները զգուշանում էին ներդրումների կատարումից»,- ընդգծեց Ղարիբաշվիլին: Վարչապետի խոսքերով, 2013 թվականի երրորդ եռամսյակում արդեն նկատվել էր էկոնոմիկայի աշխուժացումը, ինչն իր արտահայտությունը գտավ արտաքին առեւտրի աճի եւ, առանձնապես արտահանման ծավալի 22 տոկոսանոց աճի մեջ:

«Հենց որ իշխանությունը կայունացավ, նախագահ դարձավ մեր կողմից ներկայացված անձը, էկոնոմիկայում իրավիճակը կարգավորվեց եւ դա այդպես էլ կշարունակվի»,- ասաց վարչապետը:

ԲԱՐԵՓՈԽՈՒՄ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԿԱԶՄԱՎՈՐՎԵԼ Է

Դեկտեմբերի 27-ին Վրաստանի խորհրդարանը հաստատեց պետական հանձնաժողովի կազմը, որը մինչեւ 2014 թվականի սեպտեմբերի 1-ը մշակելու է երկրի հիմնական օրենքի փոփոխությունների նախագիծը: Հանձնաժողովը կգլխավորի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին:

58 անդամից բաղկացած հանձնաժողովի խնդիրն է՝ մշակել սահմանադրական օրենքի նախագիծը, որը ուժեղացնելու է մարդու իրավունքների եւ ազատության սահմանադրական երաշխիքները, բարելավելու հորիզոնական եւ ուղղահայաց բաժանման մոդելը, իշխանության ճյուղերի հավասարակշռությունն ու փոխգործունեությունը, կատարելագործելու է անկախ ինստիտուտների սահմանադրական կարգավիճակն ու գործառույթները, ներդնելու է սահմանադրության վերանայման բանական մոդել եւ վերացնելու է Սահմանադրությունում կատարվող հաճախակի փոփոխությունների արդյունքում ծագող տեքստային անհամապատասխանություններն ու թերացումները:

Հանձնաժողովի անդամներ են դարձել խորհրդարանի պատգամավորներ, գործադիր եւ դատական իշխանության ներկայացուցիչներ, ժողովրդական պաշտպանը, ո՛չ խորհրդարանական կուսակցությունների, ո՛չ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ, փորձագետներ:

ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՈՒՄ

2013 ԹՎԱԿԱՆԸ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՏԱՐԻ ԷՐ

Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարար Դավիթ Նարմանիան, դեկտեմբերի 30-ին «Թբիլիսի-Մարիոտ» հյուրանոցում անցկացված հանդիպմանը, հանրագումարելով իր գլխավորած գերատեսչության աշխատանքի արդյունքները, հայտարարեց, որ 2013 թվականը նախարարության համար մարտահրավերների տարի էր:

Նրա խոսքերով, չնայած նախորդ իշխանության կողմից մնացած բազում հիմնախնդիրների, նախարարությունը հաջողությամբ հաղթահարեց դժվարությունները:

«Մենք ստիպված վերանայեցինք շատ նախագծեր, շուրջ տասնյակ նախագծեր հասցեագրեցինք իրավապահ մարմիններին: Փոխեցինք նախագծերի ծրագրման եւ դրանց իրականացման մոտեցումները: Մրցույթները դարձան թափանցիկ ու մրցակցային, արդյունքում զգալիորեն ավելացել է մրցույթների մասնակից ընկերությունների թիվը»,- հայտարարեց Դավիթ Նարմանիան:

Նրա խոսքերով, ընթացիկ տարում նախարարության բյուջեն կազմել է 901 միլիոն լարի, որից 501 միլիոնը ծախսվել է ճանապարհային ենթակառույցների կարգավորման, 182 միլիոնը՝ տարածաշրջանային եւ մունիցիպալային ենթակառույցների վերանորոգման, 82 միլիոնը՝ փախստականներին մշտական բնակտարածքով ապահովելու, 130 միլիոնը՝ ջրամատակարարման համակարգերի վերականգնման, 4 միլիոնը՝ տարածաշրջանային եւ մունիցիպալային ենթակառույցների զարգացման քաղաքականության մշակման համար:

Նախարարության մեկամյա գործունեության արդյունքների հանրագումարմանը ներկա էին Վրաստանի գյուղատնտեսության նախարար Շալվա Փիփիան, ֆինանսների նախարար Նոդար Խադուրին, էկոնոմիկայի նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին, խորհրդարանի պատգամավորներ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԴԱՎԻԹ ՍԵՐԳԵՅԵՆԿՈ. «ՀԱՋՈՐԴ ՏԱՐՎԱ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄՆ Է»

Հանրագումարելով տարվա արդյունքները, Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պահպանության նախարար Դավիթ Սերգեյենկոն հայտարարեց, որ 2014 թվականի առաջնահերթությունն է պահպանել անցած տարվա ձեռքբերումները:

Նրա խոսքերով, գերատեսչությունը իրականացնելու է նաեւ որակի եւ սակագների պարբերական վերահսկողությունը:

Դավիթ Սերգեյենկոն անդրադարձավ նաեւ դեղորայքի վաճառքի հարցին, հայտարարելով, որ 2014 թվականի հունվարից կարգելվի առանց դեղատոմսի դեղորայքի վաճառքը: Նախարարի խոսքերով, այդ որոշումն ընդունվել է դեղագործական շուկայի նկատմամբ վերահսկողության խստացման եւ սպառողների մասին հոգատարությամբ:

«Դեղատոմսերի անցումը կիրականացվի աստիճանաբար: Բուժանձնակազմը եւ բժիշկները պետք է կրկին վարժվեն դեղատոմսերի հանձնման պրակտիկային: Այդ գործընթացը կավարտվի 2014 թվականի սեպտեմբերին»,- նշեց նախարարը:

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ՊԱՇՏՈՆԱԹՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի գլխավոր դատախազ Օթար Փարցխալաձեն պաշտոնաթող եղավ: Այդ մասին հայտարարությունը տեղակայվել է գերատեսչության կայքէջում:

«Վերջին օրերին հասարակության կողմից իմ կենսագրության առնչությամբ առաջադրված հարցերի պատճառով, ինձ պարտավոր եմ համարում, հարգել եւ հաշվի առնել հասարակության կարծիքն եւ հրաժարվել գլխավոր դատախազի պաշտոնից:

Այսօր մեր երկրում ընթանում է արդարության հաստատման գործընթացը, եւ անկախ նրանից, որ գլխավոր դատախազի պաշտոնում գտնվելը իրավական հիմնախնդիրներ չունի, չեմ ցանկանում կասկածի տակ դնել այն գործերի հետաքննության օրինականությունը, որոնք ներկայումս գլխավոր դատախազությունը հետաքննում է: Բացի դրանից, այդ պաշտոնում գտնվելով, չեմ ցանկանում ստվեր գցել վարչապետի եւ այն քաղաքական ուժի վրա, ում համար կարեւորը արդարության հաստատումն է:

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլուն եւ ողջ կառավարությանը, ում հետ համագործակցությունը ինձ համար մեծ պատիվ էր: Ես երկար տարիներ ծառայում եմ իմ երկրին, հիմա էլ պատրաստ եմ շարունակել իմ գործունեությունը ցանկացած պաշտոնում եւ հավատարմորեն ծառայել հայրենիքին»,- ասված է հայտարարության մեջ:



ՇԱՂԿԵՊՍԱԿ՝ ԶՎԻԱԴ ԳԱՄՍԱԽՈՒՐԴԻԱՅԻ ՇԻՐԻՄԻՆ

Վրաստանի առաջին նախագահ Զվիադ Գամսախուրդիայի մահվան 20-րդ տարելիցի կապակցությամբ, երկրի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին այցելել է Մթածմինդայի պանթեոն եւ հարգել նրա հիշատակը: Գիորգի Մարգվելաշվիլին ծաղկեպսակ է դրել Զվիադ Գամսախուրդիայի գերեզմանին:

«Այսօր ես այն մարդկանց հետ միասին, ովքեր անսասան կանգնած են Վրաստանի պատմության շատ դժվարին ժամանակաշրջանում, որը շատերին է դրել լուրջ, հաճախ բարոյական ընտրության առջեւ, եկել եմ այստեղ՝ Զվիադ Գամսախուրդիայի գերեզմանին, եւ հարգել նրա հիշատակը: Մենք չգիտենք նրա մահվան ստույգ ամսաթիվը, սակայն, առկա տեղեկատվության համաձայն, դա տեղի է ունեցել հենց այս ժամանակահատվածում: Ես հարգել եմ նաեւ Մերաբ Կոստավայի հիշատակը»,- հայտարարել է Գիորգի Մարգվելաշվիլին: Նախագահի գնահատմամբ՝ Զվիադ Գամսախուրդիան եւ Մերաբ Կոստավան այն քաղաքական առաջնորդներն էին, որոնք ժողովրդի հիացմունքն էին առաջացնում ավելի քան քսան տարի առաջ:

Նշենք, որ Զվիադ Գամսախուրդիայի գերեզմանին եկել էին մարդիկ, ովքեր համարվում էին նրա զինակիցները, այդ թվում՝ Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ Զվիադ Չիծիգուրին եւ Բիծինա Գուջաբիձեն: Մթածմինդայի պանթեոն էր այցելել նաեւ Վրաստանի Անվտանգության խորհրդի քարտուղար Իրինա Իմերլիշվիլին:

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԵԽՍՏՈՒԳՈՒՄԸ ՀԵՏԱՁԳՎՈՒՄ Է ԿԵՍ ՏԱՐՈՎ

Ավտոտրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական ստուգումը հետաձգվել է կես տարով: Հաշվի առնելով «Անվտանգ երթեւեկության մասին» օրենքը, 2014 թվականի հունվարի 1-ից ավտոտրանսպորտի բոլոր տեսակները պետք է անցնեն պարտադիր թեստավորում: Կառավարության նախաձեռնությամբ արագացված կարգով խորհրդարանի քննարկմանն էր ներկայացվել օրինանախագիծ, որը տրանսպորտի առանձին տեսակների բացառությամբ նախատեսում է տեխնիկական ստուգման եւ հետաձգումը մինչեւ 2015 թվականի մարտի 1-ը:

Հունվարի 1-ից պարտադիր տեխնիկական ստուգում են անցնելու ավտոտրանսպորտային այն միջոցները, որոնք պարբերական միջքաղաքային, միջպետական ուղեւորություններ են կատարում, փոխադրում են վտանգավոր բեռներ եւ, որոնց ծանրաբեռնվածությունը կազմում է 3 եւ ավելի տոննա:

27 ՄԻԼԻՈՆ՝ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՀԱՄԱՐ

Վրաստանի եվրահնտեգրացման հարցերի պետնախարար Ալեքսի Պետրիաշվիլին եւ Վրաստանում Եվրամիության ներկայացուցչության ղեկավար Ֆիլիպ Դիմիտրովը ֆինանսական համաձայնագիր են ստորագրել, ըստ որի՝ ԵՄ-ն Վրաստանին լրացուցիչ 27 մլն եվրո կտրամադրի աշխատաշուկայի կառավարման բնագավառում բարեփոխումներ իրականացնելու համար:

Ինչպես փաստաթղթի ստորագրումից հետո հայտարարեց Ալեքսի Պետրիաշվիլին, լրացուցիչ ֆինանսական օգնությունը, որը Վրաստանին տրամադրվել է «Արեւելյան գործընկերության» համագործակցության եւ ինտեգրացման ծրագրի (EaPIC) շրջանակներում, կուղղվի կոնկրետ բարեփոխումների առաջխաղացմանը եւ կոնկրետ ոլորտների զարգացմանը:

«27 մլն եվրոյից 20 միլիոնն անմիջականորեն կուղղորդվի պետական բյուջե՝ աշխատաշուկայի կառավարման ոլորտում ընթացիկ բարեփոխումներին աջակցելու նպատակով, 7 միլիոնը՝ տեխնիկական օգնություն ցուցաբերելուն, մասնավորապես, կադրերի մասնագիտական վերապատրաստման համար»,- նշել է Դիմիտրովը:

Վրաստանը EaPIC ծրագրի շրջանակներում 2012 թվականին ԵՄ-ից ստացել է 22 մլն եվրո գումարի ֆինանսական օգնություն, որն օգտագործվում է երկրում բարեփոխումների համար, որոնք իրականացվում են քրեական իրավունքի, ինչպես նաեւ սահմանների պահպանության ու միգրացիայի բնագավառներում:

ԱՄԱՆՈՐՅԱ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՌՈՒՍԼԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ. «ՎԻՐԱՀԱՅԵՐՍ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՁԳՈՒՄ ԵՆՔ ԻՆՉՊԵՍ ՀԱՐԱԶԱՏ ԵՐԿՐՈՒՄ»

Վրաստանի խորհրդարանի պատգամավոր, «Վրացական երազանք» խմբակցության անդամ, օրենսդիր մարմնի մարդու իրավունքների պաշտպանության եւ ինտեգրման քաղաքականության կոմիտեի փոխնախագահ Ռուսլան Պողոսյան՝ համեմատաբար նոր անուն վրաց քաղաքական ասպարեզում: Այսօր նա մեր թերթի հյուրն է:

- Քանի որ մեր ընթերցողներն այնքան էլ լավ չեն ճանաչում Ձեզ, ուստի, նախ ներկայացրեք Ձեզ:

- 31 տարեկան եմ, թբիլիսցի եմ, կրթությամբ՝ իրավաբան, 2004 թվականին ավարտել եմ Վրացական տեխնիկական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը: Որպես իրավաբան-խորհրդատու աշխատել եմ տրանսպորտային ընկերությունում, ստաժավորում եմ անցել Վրաստանի ժողովրդական պաշտպանի գրասենյակում: 2012 թվականի հունվարից անդամագրվեցի «Վրացական երազանք» հասարակական շարժմանը, այդպիսով նույն տարվա հոկտեմբերյան ընտրություններին հայտնվեցի կոալիցիայի պատգամավորության թեկնածուների համամասնական ցուցակում եւ դարձա Վրաստանի խորհրդարանի պատգամավոր, ընտրվեցի խորհրդարանի մարդու իրավունքների եւ ինտեգրման քաղաքականության կոմիտեի փոխնանագահ:

Ամուսնացած եմ, ունեմ երեք տարեկան աղջնակ:

- Ի՞նչ հարցերով է զբաղված Ձեր կոմիտեն:

- Նախ ասեմ, որ ընտրություններից հետո իշխանության գլուխ եկած «Վրացական երազանք» կոալիցիայի առջեւ ծառացած են բազում, տարբեր բնույթի եւ բարդություն ունեցող հարցեր: Եվ եթե հաշվի առնենք նախորդ իշխանության գործելակերպը, ապա, բնականաբար, դրանցում նշանակալից տեղ են զբաղեցնում մարդու իրավունքների հետ առնչվող՝ այսինքն՝ մեր կոմիտեի նշանակմանը համապատասխանող հարցերը:

Միանգամից ասեմ, որ կոմիտեի կազմավորման առաջին իսկ օրերից այն սկսեց գործել ծայրաստիճան ծանրաբեռնվածությամբ: Բավական է նշել, որ խորհրդարանին հասցեագրված դիմումների 45 տոկոսը առնչվում է մեր կոմիտեին, այն դեպքում, երբ մնացած 55 տոկոսը բաժին է ընկնում խորհրդարանական մյուս 15 կոմիտեներին:

Ինչպես, հավանաբար, տեղեկացված եք, մարդու իրավունքների պաշտպանության եւ ինտեգրման քաղաքականության կոմիտեում աշխատանքներն իրականացվում են մի շարք ուղղություններով, մասնավորապես կալանավայրերում բանտարկյալների, սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց իրավունքների, քաղաքացիական ինտեգրման եւ այլ ուղղություններով:

Ավելացնեմ, որ արդեն նոր տարվանից վերջին ուղղության վերահսկողությունը, որպես կոմիտեի փոխնախագահի, լրիվությամբ դրվում է ինձ վրա:

- Դուք նշեցիք, որ կոմիտեի գործունեության շրջանակներում Ձեզ վրա է դրվում քաղաքացիական ինտեգրման հետ առնչվող հարցերի վերահսկողությունը: Իսկ Դուք ինչպե՞ս եք ընկալում «Քաղաքացիական ինտեգրում» հասկացությունը:

- Միանգամից նշեմ, որ ինտեգրումը ներծուլում չէ: Դա ցանկացած ազգության անհատի հնարավորությունն է, պահպանելով իր էթնիկ յուրահատկությունները՝ մայրենի լեզուն, ազգային ինքնությունը, սովորություններն ու ավանդույթը, միաժամանակ լինել այդ երկրի լիարժեք քաղաքացի: Վրաստանի քաղաքացու ազգային ծագումը արգելքներ չպետք է հարուցի նրա պաշտոնական աստիճաններով վերելքին, ցանկացած հաստատությունում ցանկացած պաշտոնը զգաղեցնելու հարցում: Բնականաբար, վերոնշյալն իրականության վերածելու համար անհրաժեշտ են որոշակի նախապայմաններ եւ դրանցից ամենակարեւորը պետական լեզվի իմացությունն է:

- Ազգությամբ հայ քանի՞ ներկայացուցիչ է գործում օրենսդրական իշխանությունում:

- Բացի ինձանից, խորհրդարանի պատգամավոր են ընտրվել Նինոծմինդայից մեծամասնական Հենզել Մկոյանը («Անկախ մեծամասնականների» խմբակցություն) եւ Ախալքալաքիից մեծամասնական Սամվել Պետրոսյանը («Միասնական ազգային շարժում» խմբակցություն): Հատկանշական է, որ Հենզել Մկոյանը այն բացառիկներից մեկն է օրենսդիր մարմնում, որն արդեն չորրորդ անգամ ընտրվում է պատգամավոր եւ միակը պատգամավորական կորպուսում, որ միեւնույն շրջանից չորրորդ անգամ ընտրվել է մեծամասնական: Համաձայնեք, որ դա իրոք, նշանակալի փաստ է:

- Իսկ ի՞նչ կասեիք քաղաքացիական ինտեգրման, մասնավորապես վիրահայերի ինտեգրման որակի մասին:

- Միանգամից նշեմ, որ վիրահայերս Վրաստանում մեզ զգում ենք ինչպես հարազատ երկրում, այն էլ մի քանի սերունդներով: Իսկ եթե խոսենք կոնկրետ, ապա ներկա դրությամբ Վրաստանում ոչ մի ազգային խումբ, այդ թվում նաեւ վրացիները, չեն կարող լավ ապրել, քանի որ երկրում անչափ շատ են սոցիալական ու տնտեսական հիմնախնդիրները:

- Իսկ ի՞նչ կասեիք Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի ծգծգվող վերանորոգման մասին:

- Որքանով տեղեկացված եմ, թատրոնի շենքը նստվածք է տվել, եւ հիմքերը դեֆորմացվել են: Այն ներկայումս վթարային վիճակում է: Ինչպես վստահեցնում են մասնագետները, տվյալ պարագայում մասնակի, մակերեսային վերանորոգմամբ իրավիճակը փոխել գրեթե անհնարին է: Տեղեկացել եմ, որ նախկին վարչապետը հանձնարարել էր միջոցներ հատկացնել վերանորոգման համար, թեպետ դրա մանրամասներին տեղյակ չեմ: Ցավոք, ի պատասխան ձեր հարցին ավելացնելու ոչինչ չունեմ:

- Ինչպիսի՞ն են ազգային փոքրամասնությունների լեզուներով, մասնավորապես հայերենով կրթություն ստանալու հեռանկարները:

- Ամեն ինչ կախված է պահանջարկից: Եթե ազգային փոքրամասնության ներկայացուցիչները ցանկանում են կրթություն ստանալ մայրենի լեզվով, ապա նրանց այդ իրավունքը պաշտպանված է Վրաստանի օրենսդրությամբ: Իշխանությունը բոլոր ազգերի ներկայացուցիչների համար միանման է երաշխավորում այդ իրավունքը: Այլ հարց է, որ անհրաժեշտ է գտնել օպտիմալ ձեւաչափը, ո՞րն է գերադասելի՝ ազգային եւ բիլինգվային կրթությունը:

- Այս հարցազրույցը լույս է տեսնելու ամանորյա համարում: Ի՞նչ կցանկանայիք մաղթել Նոր տարվա առթիվ:

- Բնականաբար, թերթի բոլոր ընթերցողներին, բոլոր վիրահայերին շնորհավորում եմ Նոր տարվա առթիվ: Մաղթում եմ, որ 2014 թվականը լինի խաղաղության, բարօրության եւ երջանկության տարի ձեզ եւ ձեր ընտանիքների համար: Բնականաբար, չեմ կարող իմ ամենաանկեղծ բարեմաղթանքները չհղել, տնտեսական առաջընթաց եւ բարօրություն չմաղթել մեր Վրաստանին, նրա բոլոր քաղաքացիներին:

ՄԻԽԱՅԻԼ ԱՅԴԻՆՈՎ

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆ

Թանկագի՛ն հայրենակիցներ.

Շնորհավորում եմ Ամանորի եւ Սուրբ Ծննդի առթիվ, ցանկանում առողջություն եւ աշխատանքային նորանոր հաջողություններ: 2014 թվականը թող լինի ինչպես մեր մունիցիպալիտետի, այնպես էլ ողջ երկրի համար խաղաղության, առաջընթացի ու նոր ձեռքբերումների տարի, ցանկանում եմ երջանկություն բոլոր ընտանիքներին, ամենայն բարիք:

Հիմքեր ունենք ասելու, որ 2014 թվականին կիրականացվեն ավելի մեծամասշտաբ շինարարական աշխատանքներ, բնակչության կենսամակարդակի բարձրացման համար կստեղծվեն անհամեմատ ավելի լավ պայմաններ, մարդկանց հուզող շատ հիմնահարցեր կստանան իրենց դրական լուծումը:

Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ:

Էդուարդ Աղասարյան
Ախալքալաքիի մունիցիպալիտետի վարչության նախագահ

- 2013 թվականը նշանավորվեց զավակիս՝ Սանդրոյի հետ դիմավորելու մեծ պարգեւով, քանի որ հրաշամանուկս լույս աշխարհ եկավ 2012-ի դեկտեմբերի 18-ին: Այդուհանդերձ, փորձում էի ետ չմնալ թատերական կյանքից:

Բոլորովին վերջերս, մեր թատրոնի ռեժիսոր Լեւոն Ուզունյանի երաշխավորությամբ, ինձ զանգահարեց ԱՄՆ-ում գործող ծնունդով թբիլիսցի հայտնի կինոռեժիսոր Գիա Կերեսելիձեն ու հայտնեց, որ Վրաստանում պատրաստվում է նկարահանել «Սուրբ Նինո» կինոֆիլմը եւ ինձ ցանկանում է տեսնել գլխավոր կերպարներից մեկի՝ Սուրբ Գայանեի դերում: Երջանիկ եմ, որ ընդամենը մեկ փորձից հետո, ինձ հաստատեցին այդ դերում:

Թատրոնի կոլեկտիվի անունից շնորհավորում են ձեր ընթերցողների եւ ողջ վիրահայության Նոր տարին եւ Սուրբ Ծնունդը:

Նանո Պողոսյան
Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի դերասանուհի

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ. «2014 ԹՎԱԿԱՆԸ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ ԽՈՍՏԱՆՈՒՄ Է ԼԻՆԵԼ ԱՎԵԼԻ ԲԵՂՄՆԱՎՈՐ»

Դեկտեմբերի վերջին՝ տարեմուտի հետ, Վրաստանի կրթօջախներում ավարտվեց ուսումնական առաջին կիսամյակը, երկրորդը կսկսվի 2014-ի հունվարից: Ի՞նչ ձեռքբերումներ ու խնդիրներ են գրանցվել Վրաստանի կրթական համակարգում թեմայի շուրջ մեր զրուցակիցն է Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ազգային ուսումնական ծրագրերի վարչության ոչ վրացալեզու ուսումնական նյութերի համակարգող Կարինե Մանուկյանը:

- Ի՞նչ նոր նախագծեր են իրականացվում ոլորտում:

- Մոտ ապագայում ծրագրվում է Ազգային ուսումնական ծրագրի վերանայում, այդ նպատակով՝ նախարարության փորձագետները, մայրաքաղաքում ու տարածաշրջանների դպրոցների մանկավարժների եւ տնօրինության հետ, անց են կացնում հանդիպումներ, որպեսզի հաշվի առնվեն նրանց առաջարկներն ու նախաձեռնությունները: Նախատեսվում է նաեւ այդ նույն փաստաթղթի՝ Ազգային ուսումնական ծրագրի ներդրման վերանայում, ութ փորձնական դպրոցներում նախարարության մասնագետները դասալսումների միջոցով ուսումնասիրում են ներդրման գործընթացը՝ հետագա փոփոխությունների համար: Նախարարությունը 2013 թվականը համարում է ներառական (ինկլյուզիվ) կրթությունը՝ որպես կրթության գերակա ուղղություն հայտարարելու տարի: Այս շրջանակներում իրականացվեցին մի շարք նախագծեր՝ «Հատուկ կրթական անհրաժեշտությամբ աշակերտի (ՀԿԱ) կրթական իրավունքների իրացումը՝ սպորտի ժամերին ընդգրկվելու միջոցով», «Կրթության մատչելիության ապահովում՝ անապահով, վարքի խանգարման խնդիրներ ունեցող եւ Վրաստանում դպրոցից դուրս մնացած երեխաների համար»: Ըստ այդ նախագծերի, եթե կրթօջախում կա հատուկ կրթական անհրաժեշտությամբ աշակերտ, մտցվում են հատուկ ուսուցչի եւ հոգեբանի հաստիքներ: Նշյալ ուսուցիչների համար անցկացվում են վարժանքներ: Հրատարակվել են մի շարք ուղեցույցներ, այդ թվում՝ էլեկտրոնային: Ստեղծվել են ինտեգրված դասարաններ եւ առաջին անգամ ՀԿԱ աշակերտներին տրվեց մասնագիտական կրթություն ստանալու հնարավորություն:

- Ի՞նչ աշխատանք է տարվում երկլեզու (բիլինգային) կրթության ուղղությամբ:

- 2017 թվականին, ոչ վրացալեզու դպրոցների տարրական դասարանների համար, պատրաստ կլինեն գործնական ուղեցույցներ երկլեզու կրթության իրականացման համար: Յուրաքանչյուր հաջորդ ուղեցույցի լեզվական բովանդակությունը հիմնված կլինի նախորդի վրա: Կկազմակերպվի այդ ծրագրով դասավանդող ուսուցիչների վերապատրաստում:

Ավարտվեց «Վրաստանի ազգային ուսումնական ծրագրի եւ այլ երկրների ուսումնական ծրագրերի համեմատական վերլուծությունը» նախագիծը, որի նպատակն էր համեմատել ծրագիրը այլ երկրների ուսումնական ծրագրերի հետ եւ նրա հետագա զարգացման համար մշակել հանձնարարականներ:

- Ինչպիսի՞ն է դպրոցների գրադարանների վիճակը:

- Մեծ ուշադրություն է դարձվում դրանց գործունեության ակտիվացմանը, մշակվել է դպրոց գրադարանավարի չափորոշիչ (ստանդարտ): Նախադպրոցական հասակի երեխաների համար իրականացվել է «Նախադպրոցական կրթության քաղաքականության անցկացում՝ Վրաստանում վաղ մանկական հասակի կրթության հավասար մատչելիության եւ որակի բարելավման համար» նախագիծը:

- Ի՞նչ կցանկանայիք մեր ընթերցողներին:

- Համոզված եմ, որ 2014 թվականը համակարգի համար կլինի ավելի բեղմնավոր:

Վերջում, օգտվելով առիթից, Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների նախաշեմին՝ ուզում եմ սրտանց շնորհավորել բոլորին, ցանկանալ անամպ երկինք, քաջառողջություն, նորանոր ձեռքբերումներ ու նվաճումներ՝ ե՛ւ անձնական կյանքում, ե՛ւ աշխատանքում:

Կցանկանայի, որ 2014 թվականն իր հետ բերեր ջերմություն, լույս, որ մարդկանց մոտ ավելանային սերն ու հոգածությունը, սրտակից ու ազնիվ վերաբերմունքը միմյանց հանդեպ, անկեղծություն ու բարություն՝ ամենուր եւ ամեն ինչում:

Զրուցեց
ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆԸ